

## Թումո կենտրոնի ղեկավար/Կողբ

### Աշխատանքի նկարագիրը

Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնը փնտրում է մոտիվացված, դինամիկ և պրոֆեսիոնալ անհատների Կողբի Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնը ղեկավարելու համար: Կենտրոնի ղեկավարը պատասխանատու է ընթացիկ աշխատանքների համակարգման, Թումո կրթական ծրագրի և համապատասխան գործընթացների ներդրման համար՝ ապահովելով կապը և սերտ համագործակցությունը գլխամասի հետ:

### Աշխատանքային գործառույթներ

- Համակարգել աճնակազմի աշխատանքները՝ ապահովելով Կողբի Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի ուսանողների ներգրավվածությունը, ինչպես նաև Թումո ծրագրի արդյունավետ իրականացումը
- Հանդիսանալով թիմի ղեկավար մոտիվացնել թիմին, խթանել թիմի անդամների աշխատանքը՝ միաժամանակ ապահովելով վերջիններիս աշխատանքային գործառույթների արդյունավետ իրականացումը
- Վերահսկել Կողբի Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի աշխատանքային գործընթացները՝ ներառյալ աշխատանքի ճիշտ բաշխումը, որակի վերահսկողության պլանավորումը և իրականացումը
- Վերահսկել Կողբի Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնում անցկացվող դասընթացների որակը՝ հետադարձ կապ ապահովելով կրթական բաժնի ղեկավարի հետ:
- Խրախուսել և անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել թիմի անդամների մասնագիտական աճի ապահովման համար, ուղղորդել այն աշխատակիցներին, որոնք կատարելագործման և օգնության կարիք ունեն
- Հաղորդակցման բաժնի հետ համատեղ ապահովել արդյունավետ հաղորդակցություն Թումո ուսանողների, նրանց ծնողների, ինչպես նաև տեղական այլ գործընկերների հետ
- Մշակել, պատրաստել, վերլուծել բյուջեն և ապահովել ռեսուրսների արդյունավետ օգտագործումը՝ համաձայնեցնելով ողջ գործընթացը գլխամասի հետ:
- Մշտապես հետևել աշխատանքային գործընթացների իրականացմանը, հանդես գալով աշխատանքի արդյունավետության կատարելագործմանն ուղղված առաջարկներով
- Ներկայացնել Թումոն տեղական միջոցառումների ընթացքում, ինչպես նաև Թումո կենտրոն այցելող հյուրերին

- Կազմակերպել դասընթացավարների և աշխատակազմի և անձնակազմի այլ անդամների այցը Կողբի Թումո կենտրոն
- Առաջակել և նախաձեռնել ռազմավարական համագործակցության եզրեր այլ կազմակերպությունների և անհատների հետ
- Մասնակցել հատուկ նախագծերի մշակման և իրականացման, անձնակազմի հավաքագրման գործընթացներին, իրականացնել գլխավոր տնօրենի կողմից բանավոր, գրավոր կամ էլեկտրոնային եղանակով տրված այլ հանձնարարություններ

### **Անհրաժեշտ որակավորումներ և հմտություններ**

- Թիմ ղեկավարելու փորձառություն ունեցող դինամիկ և ակտիվ անհատականություն
- Թիմի ադամներին ղեկավարելու, մոտիվացնելու, դեպի ընդհանուր նպատակն ուղղորդելու հմտություններ և պատրաստակամություն
- Խնդրի կամ կրիտիկական իրավիճակի վերլուծության և գնահատման ունակություն
- Ճանաչված համալսարաններից մեկում բարձրագույն կրթության դիպլոմի առկայություն
- Գերազանց հաղորդակցման հմտություններ՝ ներառյալ գրավոր հաղորդակցումը և միջանձնյա շփումը, ինչպես նաև հրապարակավ ներկայանալու հմտությունը հայերեն և անգլերեն լեզուներով
- Բանակցային և խնդիրների արդյունավետ լուծման համար անհրաժեշտ հմտություններ

Վայրը՝ գյուղ Կողբ, Չայաստան

### **Դիմելու կարգը**

Չետաքրքրված թեկնածուները կարող են ուղարկել իրենց ինքնակենսագրությունները [jobs@tumo.org](mailto:jobs@tumo.org) էլ. հասցեին՝ նշելով «Թումո կենտրոնի ղեկավար/Կողբ» նամակի վերնագրի (Subject) դաշտում: Չամապատասխան թեկնածուները կիրավիրվեն հարցազրույցի:

**Վերջնաժամկետը՝ 28.04.2017**